հաւասար բաժանորդ եկեղեցին Բեթղեհէմի, պարտ է մընալ զկնի նոցա, իսկ եթէ ոչ՝ 'ի յատկացեալ տեղիս մեր կատարեմք զպաշտամունս մեր. այլ Կուսակալն ասէր, զոր միանգամ եառու, ոչ առնում յետս, զի առաջնութիւնն Ցունաց է ամենայն ուրեք, եւ 'ի նոյն գիշերի մեկնեցաւ յերուսաղէմէ. եւ Հայք շրջան առ Դատաւորն եւ յայտ արարին նմա զվնասակար դատաստանս Բդեշխին եւ առին 'ի նմանէ Իլամ և հանրագիր յայլազգեաց, և առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս, և զկատարեալն լսել 'ի բերանոյ Յակոբ եպիսկոպոսի։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս դիպաւ գործ աղետալի, զի վրդովեալ իմն էր անդ հասարակութիւն Հայոց, զի մատնութեամբ ուրացեալ սարկաւագի ումեմն ըմբռնեցան ոմանք 'ի գլխաւորաց Հայոց և եդան 'ի բանտի, որք էին Գարաքեահեայ Աբրահամ, Արփիարեան Մկրտիչ, Կելկելեան պապա Պողոս, որպէս թէ գիտութեամբ սոցա լեալ իցէ աղմուկն (1820. 'ի 26 Օգոստոսի)։ Եւ դարձեալ մատնութեամբ նոյն ուրացելոյ արքունի զինուորք և Ոստիկանք եկին 'ի ճանապարհ երթալ 'ի Կարին, որոնել և ըմբռնել զՅովհաննէս և զԲարսեղ վարդապետս Էջմիածնի։ Եւ հասեալ խնդրակաց 'ի Նալբ Խան կոչեցեալ տեղին, կալան զՏ. Կիրակոս Կաթուղիկոսն Սսոյ հանդերձ Յովհաննէս Եպիսկոպոսիւ և Գրիգոր վարդապետիւ նորին, որ այն ինչ մեկնեալ էին 'ի մայրաքաղաքէն գնալ 'ի տեղիս իւրեանց, և բռնութեամբ ածին 'ի Կոստանդինուպոլիս (յ8 Սեպտեմբերի), և զկնի 10 աւուրց հազիւ կարացին ազատել զնա Պատրիարքն և Գլխաւորք ազգին, և առեալ հրաման առաքեցին յԱթոռն իւր 'ի Սիս։ Եւ 'ի նմին աւուր 'ի 18 Սեպտեմբերի, օրն շաբաթ, ժամ 11, մինչ ժողովուրդն էր յեկեղեցին յերեկոյի պաշտաման, բերեալ դահճաց զՍագայեան Ծերունազարդ Մարտիրոս, ըստ ոմանց Գրիգոր Ամիրայն հրամանաւ Արքայի գլխատեցին առաջի դրան Մայր եկեղեցւոյ, որ անպարան էր 'ի չարեաց, սորա յիշատակն է ծանրագին վարագոյրն 'ի խորանի Գլխադրի։ Կախեցան 'ի Պարմագ գաբու դէմ յանդիման միմեանց երկոքին ուրացելքն, Սարկաւագն և մանկահասակ Ազարեանցն։ Տէր Պաղտասար և Թաւուդի օղլու (եղբայր Երեմեա Եպիսկոպոսի), գլխատեցան 'ի